<<ՀԱՍՏԱՏՎԱԾ Է>>

<<Յունիբանկ>> ԲԲԸ

«20» 05.2024թ.

որոշմամբ

ՅՈՒՆԻԲԱՆԿ

<<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

<<Յունիբանկ>> ԲԲԸ-ն իր հաճախորդներին բարձր որակի ծառայություն մատուցելու, տեղեկատվական անվտանգության սպառնալիքներից պաշտպանելու, հաճախորդներին վերաբերող տեղեկատվության գաղտնիության, ամբողջականության և հասանելիության պահպանման համար, ինչպես նաև մշտապես իր կողմից մատուցված ծառայությունների որակի և անվտանգության բարելավման նպատակով <<Յունիբանկ>> ԲԲԸ-ի ղեկավարությունը որոշեց պահպանել և բարելավել Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը համաձայն միջազգային ISO/IEC 27001:2022 ստանդարտի:

«Յունիբանկ» ԲԲԸ-ն իր գործունեության մեջ կիրառում է նորագույն սարքեր, տեխնոլոգիաներ և լավագույն ընկերությունների կողմից մշակված ծրագրային ապահովումներ:

«Յունիբանկ» ԲԲԸ-ն իր գործունեության անընդհատության ապահովման համար ստեղծել է պահուստային տարածք և տեղեկատվական համակարգեր:

ՆՊԱՏԱԿ

Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի նպատակն է՝ ապահովել «Յունիբանկ» ԲԲԸ-ի, ներառյալ հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը, պահպանել տեղեկատվության հասանելիությունը, գործունեության անընդհատությունը և նվազեցնել կորուստների ռիսկը՝ տեղեկատվական անվտանգության միջադեպերի և դրանց հնարավոր ներգործության կանխման միջոցով:

Տեղեկատվական անվտանգության քաղաքականության նպատակն է. պաշտպանել «Յունիբանկ» ԲԲԸ-ի տեղեկատվական ակտիվները ներքին, արտաքին, կանխամտածված և պատահական սպառնալիքներից:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը երաշխավորում է.

- տեղեկատվության պաշտպանությունը ցանկացած ոչ արտոնված օգտագործումից,
- տեղեկատվության գաղտնիության ապահովումը,
- տեղեկատվության ամբողջականության պահպանումը,
- բիզնես գործընթացների համար տեղեկատվության հասանելիության պահպանումը,

- համապատասխանությունը օրենսդրական և կանոնակարգող պահանջներին,
- գործունեության անընդհատության պլանների մշակումը, պահպանումը և փորձարկումը,
- տեղեկատվական անվտանգության ուսուցման հասանելիությունը բոլոր աշխատակիցների համար:

2. «Յունիբանկ» ԲԲԸ-ում մշակվում և ներդրվում են Տեղեկատվական անվտանգության քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ ընթացակարգերը:

3. Ապահովվում են տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի հասանելիության բիզնես պահանջները:

4. Տեղեկատվական անվտանգության քաղաքականության պահպանման և ներդրման ընթացքում՝ օժանդակության և խորհրդատվության համար պատասխանատու է Տեղեկատվական անվտանգության դեպարտամենտի տնօրենը:

5. «Յունիբանկ» ԲԲԸ-ի ղեկավարությունը ուղղակի պատասխանատվություն է կրում Տեղեկատվական անվտանգության քաղաքականության իրականացման և իրենց ենթակայության տակ գտնվող աշխատակիցների կողմից սահմանված պահանջներին համապատասխանության համար:

6. Տեղեկատվական անվտանգության քաղաքականության կատարումը պարտադիր է:

Սույն հայտարարագիրը մշակվել է հաշվի առնելով «Յունիբանկ» ԲԲԸ-ի Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը:

Ամսաթիվ՝ 20.05.2024թ.

Պաշտոն՝ Տեղեկատվական անվտանգության դեպարտամենտի տնօրեն,

ՏԱԿՀ մենեջեր՝ Լուսինե Սիմոնյան